

18 MAY 2010

ՀԽՍՀ ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

491.99(07)


Ե-81

ԼԵԶԱԳՐԱԿԱՆ ՓԱԿՈՒԼՏԵՏ

Ծ Ր Ը Գ Ի Ր

Հ Ա Յ Ո Ց Լ Ե Զ Վ Ի

I կուրսի համար



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՄԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1940



Խմբագիր՝ Ս. ՍԱՂՈՄՅԱՆ
Տեխ. խմբ. Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սրբազրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գլխավորի լիազոր. Ե. 1074, Պատվեր 496, տիրաժ 750
Հանձնված և արտադրության 17 դեկտեմբերի 1939 թ.
Մտորագրված և տպագրության 28 հունվարի 1940 թ.
Թուղթ 60X43, ա լազր. մամուլ 0,5 մեկ մամուլում 36,300 չիշ

Մանկ. Բնասխառտի տպարան, Մարջի փ. 17, Յերեվան 1939

ՀԱՅՈՑ ԼԵՂՎԻ ԾՐԱԳԻՐ

I

Ք Ե Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ն Ե Ր Ա Մ Ա Կ Ա Ն

Քերականությունը վորպես լեզվի գիտության մի մասը: Քերականության բաժինները՝ հնչյունաբանություն, ձևաբանություն և շարահյուսություն:

I. ՀՆՁՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Խոսելու որդանները և նրանց ֆունկցիան: Պրական լեզվի հնչյունական սխառմը, հնչյուն և տառ. այբուբենը և նրա ծագումը. բառ, վանկ և տողադարձ: Հնչյունափոխություն:

Բառը յեվ նրա կազմությունը

Բառի ուղղակի և փոխաբերական իմաստները. բառի նշանակության փոփոխությունն ըստ շարահյուսության և դործածության պայմանների (հասարակական, գասակարգային կեցության, կենցաղ և այլն): Նույնանիշ, հոմանիշ, համանուն բառեր:

Հասկացողություն բառի ձևվորչների մասին—արմատ և ածանց, հիմք և վերջավորություն:

Բառակազմության յեղանակները՝ պարզ, բարդ, ածանցավոր և բարդ ածանցավոր բառեր: Իսկական և անիսկական բառադրություններ. հարադիրներ և կցական բարդություններ. հոդակազմ և անհոդակազմ բարդություններ:

Նոր բառեր կազմելու յեղանակները.

ա. Բառի իմաստների փոփոխություն, վորը տեղի յե ունենում հասարակական կյանքի փոփոխության հետևանքով (բաց, ճեղքվածք, վարժապետ, պարոն . . .):

բ. Հայերեն արմատների և ածանցների ոգնություն (գերապատարել, յեկույթ, հարվածային, հանույթ . . .):

գ. Բարդ բառեր կազմելու սովորական յեղանակով (կառու-
ման քանոնով, բանուծ):
դ. Նորագույն հապավումների յեղանակով:

Ուղղագրութուն

Ը—ձայնավորի ուղղագրությունը:
Ա, օյ, յա, յո, յու, իա, իո, իու, ին յերկնայունների ուղղա-
գրությունը:
Յ—ձայնակապը և նրա ուղղագրությունը:

II. ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Խոսքի մասեր

Բառերի քերականական կառնիքիկացիան (ըստ նրանց ի-
մաստի, նախադասության մեջ ունեցած դերի, բառերի հետ ու-
նեցած կապակցության ձևի): Նախադասության անդամ դարձող
խոսքի մասեր (թանձրացողական իմաստ ունեցող), նախադասու-
թյան անդամներ կապող (ձևական իմաստ ունեցող) խոսքի մա-
սեր, նախադասությունից դուրս գտնվող խոսքի մասեր (Ձայնար-
կություն):

Բ ա յ

Բայի գործածությունը նախադասության մեջ վորպես ստո-
բորոգյալ, յենթակա և լրացում. պարզ և բաղադրյալ ստորոգյալ:
Բայի բաժանումն ըստ յերկու հիմնական ձևի՝ դերբայական
և յեղանակային:

Ա. ԲԱՅԻ ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԶԵՎԵՐԸ ԿԱՍ ԴԵՐԲԱՅՆԵՐ

Դերբայների իմաստն ու գործածությունը խոսքի մեջ:
Բայական և գոյական հատկությունների համատեղումն անորոշ
դերբայի մեջ: Անորոշ դերբայի վերջավորությունը և խոնար-
հումը: Ածական և բայական հատկությունների համատեղումը հա-
րակատար և յենթակայական դերբայների մեջ: Անկատար, ապառ-
նի, վաղակատար, հարակատար և ըղձական դերբայների դերը
խոնարհման մեջ:

Դերբայների վերածումը գոյականի և ածականի (հոգևած
դրող . . .):

Բ- ԲԱՅԻ ՅԵՂԱՆԱԿԱՅԻՆ ԶԵՎԸ

Սահմանական, հրամայական, ըղձական, յենթադրական և
հարկադրական յեղանակները. սրանց կազմությունը, ժամանակ-
ները, ուղղագրությունը: Դեմք և թիվ: Բայի սեւերը՝ ներգոր-
ծական, կրավորական, չեղոք: Բայերի կազմությունը և կերպե-
րը: Կերպավորող ածանցներ (եցն, ոցն, ցն, վ, տա, ոտ, կոտ և
այլն):

Բայերի խոնարհման բոլոր ձևերը. անկանոն բայերի խո-
նարհումը—(լալ, գալ, տալ, լինել, ուտել, դառնալ . . .): Պակա-
սավոր բայերի խոնարհումը (գիտենալ, կենալ, ցանկանալ, հու-
սալ):

Հավելավոր բայերի խոնարհումը՝ (եմ, կամ, կարող եմ,
արժեմ):—Արդեւական հրամայականը:

Գ ո յ ա կ ա ն

Գոյականի գործածությունն իբրեւ յենթակա, կոչական բառ,
ստորոգյալ և լրացում: Թիվը և հոլովումը: Հոլովները, սրանց
իմաստային և կիրառական նշանակությունը: Հոլովիչները (ի,
ու, ան, յան, ոջ, որ, վա, ց): Գրաբար հոլովաձևերի մնացորդ-
ներ: Հոգեր: Գոյականակերտ հոլովներ:

Ա. ծ ա կ ա ն

Ածականը վորպես հատկություն և վերաբերություն ցույց
տվող բառ: Ածականների գործածությունը նախադասության
մեջ, վորակական և հարաբերական ածականներ: Համեմատական
աստիճանները: Ածականի գործածությունը գոյականի հետ: Ա-
ծականների փոխանցումները գոյականի և ընդհակառակը: Ածա-
կանակերտ ածանցներ:

Թ վ ա կ ա ն

Թվականը վորպես առարկայի քանակ և կարգ ցույց տվող
բառ: Թվականի գործածությունը նախադասության մեջ: Տեսակ-
ները: Թվականների ուղղագրությունը: Դասական թվականների

գրավոր, արտահայտություն յերեք ձև—հռոմեական, արաբական
թվանշաններով և հայերեն տառերով: Թվականի գործածությունը
և գոյականի հետ:

Գ Ե Ր Ա Ն Ո Ւ Ն

Գերանունները վերջում փոխարինող բառեր: Դերանունների
գործածությունը նախադասության մեջ: Դերանունների ած-
ականներն ըստ իմաստի՝ անձնական, ցուցական, ստացական, փո-
խադարձ, հարցական, հարաբերական, անորոշ, վորոշյալ և ժըխ-
տական: Դերանունների հոլովումը: Ուղղագրությունը:

Մ ա կ բ ա յ

Մակբայը վերջին ածականից տարբեր խոսքի մաս թե իր
ձևով և թե իր ֆունկցիայով: Մակբայների տեսակներն ըստ ի-
մաստի՝ տեղ, ժամանակ, քանակ, ձև ցույց տվող մակբայներ:
Մակբայների գործածությունը նախադասության մեջ՝ վորո-
շյալ ստորոգյալի լրացումներ: Մի շարք մակբայների ծագումը
գրաբարի թեքման ձևերից:

Կ ա պ

Կապերի սինիմանությունը: Կապերի գործածությունը նախադա-
սության մեջ: Նախադրություններ և յետադրություններ:
Իսկական և անիսկական կապեր. կապական բառեր. նախադրու-
թյունների և յետադրությունների ծագումը: Գրաբարյան հոլո-
վաձևերից ստացված կապեր:

Շ ա դ կ ա պ

Շողկապը և նրա գործածությունը նախադասության մեջ:
Համադասական և ստորադասական շողկապեր. պարզ և բաղա-
դրյալ շողկապեր: Ուղղագրությունը:

Ձ ա յ ն ա Ր Կ ո Ւ Թ յ ո Ւ Ն

Ձայնարկությունը և նրա առանձնահատկությունը խոսքի
մյուս մասերից (հմոցությունից բնույթ):
Կետադրություն:

Նախադասությունների վերլուծությունը ըստ խոսքի մասերի:

III. ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Ա. ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

1. Մտածություն և լեզու. մտածություն և խոսք. խոսքի
տեսակները՝ նախադասություն, ճառ, յերկ, հրաման, կոչ և այլն:
2. Նախադասությունը և նրա հիմնական հատկանիշները
(արտահայտում և մի անբաղձական միտք, խոսքի միավորն և
և այլն):

3. Նախադասության տեսակներն ըստ կազմության. պարզ
և բարդ: Յենթակա և ստորոգյալ: Դրանց միասնությունն առ հա-
կադրությունը: Յենթակալի և ստորոգյալի լրացումները: Հոլով-
ների կիրառությունը, նրանց ֆունկցիան: Վորոշիչ հոգի դերը
վորջյալ մորֆոլոգիական կապերի հոլովման ժամանակ (վորո-
շյալ և անորոշ առումներով—անձ և առարկա ցույց տալու ժա-
մանակ):

4. Նախադասության տեսակներն ըստ յերանգի՝ հարցական
բացականչական կամ կոչական (դիմողական) և պատմողական:
Նախադասություն տեսակներն ըստ բնույթի՝ հատուտական և
ժխտական: Միջանկյալ բառերով, կոչականով և ձայնարկու-
թյուններով նախադասություններ, համադաս լրացումներով նա-
խադասություններ: Կետադրությունը: Թերի նախադասություն,
անորոշ դերբայով կազմած նախադասություն:

Բ. ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. Պարզ և բարդ նախադասության հարաբերությունը:
Բարդ նախադասության կառուցվածքը, տեսակները՝ միավորյալ,
համադասական և ստորադասական: Համադաս շողկապերի գոր-
ծածությունը միավորյալ և համադասական նախադասություն-
ների մեջ: Բարդ նախադասության մասերի դասավորությունը:
Կետադրություն:

2. Բարդ ստորադասական նախադասության կառուցվածքը:
Գլխավոր և յերկրորդական նախադասություններ:

3. Ստորադասական նախադասության տեսակները: Խառը
տիպի նախադասությունները: Զեղչված յենթակալով, զեղչված

ՀՀ Ազգային գրադարան



NL0246519



ստորագրելով նախադասություններ: Ուղղակի խոսքով, միջանկյալ նախադասությունով նախադասություններ: Դերբայական լրացումներ: Կողմնակի յենթակա:

Շարադասություն

Գաղափար շարադասության մասին: Սովորական շարադասություն. շրջուն շարադասություն: Կետադրություն:

Բ. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԳՐՔՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Յահուն, զեղեցիկ, արտահայտիչ ընթերցանություն: Գլը՝ քով աշխատելու յեղանակները (ընդգծումներ, դիտողություններ լուսանցքներում, պլան կազմել, ցիտատ հավաքել):

Գ. ԳՐԱՎՈՐ ՅԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔ

Շարադրություն ազատ թեմայով, շարադրություն առաջադրած թեմայով: Ուղղագրական և քերականական վարժություններ: Թելադրություն:

Կանոնավոր դրական լեզվով խոսելու և պատմելու հմտություն. բարբառայնության հետքերի վերացման աշխատանքներ. զեղեցիկ վսճական պրիոթների ոգտագործում խոսելու ժամանակ: Բառապաշարի հարստացում, թե հին և թե նոր բառերով:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա. Ղարիբյանի քերակ. դասագիրքը. 1939 թ հրատ. և Գ Սևակի շարահյուսության ձեռնարկը. 1938. հրատ.